ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Շնող, 2փող. շ.4/3, հեռ. 077 608-120, 077 608-120, shnogh.lori@inbox.ru

N 305
21 մայիս 2020թ.

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն մարզպետ

Կից Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի ղեկավարի՝ 2020 թվականի թիվ 93- 100 որոշումները:

Առդիր՝ 12 թերթ:

Հարգանքով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դավիթ Ղումաշյան**

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Հ. Ճիճիլյան
+374 98 967670

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 077 608-120, shnogh.lori@inbox.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՄԱՅԻՍԻ 2020թվականի N 93-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 25 ՄԱՅԻՍԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ՝ «ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ,ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ «ԹԵՂՈՒՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 40-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ ենթակետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետով , 33-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով ` **որոշում եմ .**

1.ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի ղեկավարի՝ 25 մայիսի 2015 թվականի «Շնող համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող,ինչպես նաև «Թեղուտ» փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին» թիվ 40 -Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 3-րդ կետի 36-րդ ենթակետի «290-095-ից» ծածկագիրը կարդալ նոր՝ «290-001-ից» խմբագրությամբ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

20 __ թ. _____ ____
գ.Շնող

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 077 608-120, shnogh.lori@inbox.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՄԱՅԻՍԻ 2020թվականի N 94-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 22-րդ ենթակետով, 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 29-12-2005 թվականի 2387 Ն որոշմամբ,հիմք ընդունելով համայնքի կադաստրային քարտեզը և հաշվի առնելով համայնքի անշարժ գույքերի վերահասցեավորման անհրաժեշտությունը՝ **որոշում եմ.**

1. Շնող համայնքի Շնող բնակավայրի վարչական սահմանում գտնվող 06-088-0290-0001 ծածկագրից առանձնացվող 3,6279 հահողամասինտրամադրել ՀՀ Լոռու մարզ, համայնք Շնող, բնակավայր Շնող, 2-րդ թաղամաս ,թիվ 47/1 փոստային հասցեն
2. Շնող համայնքի Շնող բնակավայրի վարչական սահմանում գտնվող 06-088-334-0005 ծածկագրի 3,8171 հա հողամասին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, համայնք Շնող, բնակավայր Շնող 2-րդ թաղամաս, թիվ8/1 փոստային հասցեն
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

20 __ թ. _____ _____
գ.Շնող

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 077 608-120, shnogh.lori@inbox.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՄԱՅԻՍԻ 2020թվականի N 95-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԱՐՏԱԿ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ»-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի տարածքում 2020թ. համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 75-Ն որոշումը և Արտակ Մելիքսեթյանի հայտը՝ **որոշում եմ**.

1.«Արտակ Մելիքսեթյան» անհատ ձեռնարկատիրոջը (հարկ վճարողի հաշվառման համար՝ 65117097 տալ ոգելից խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն 2020 թվականի ապրիլի 01-ից մինչև 2020 թվականի հունիսի 30-ի համար (կիրառվել է «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով հաստատած՝ 0.3 գործակիցը):
2.Հարկատուից գանձել համապատասխան տեղական տուրք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

20 __ թ. _____ ____
գ.Շնող

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 077 608-120, shnogh.lori@inbox.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՄԱՅԻՍԻ 2020թվականի N 96-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ՄԱՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ»-Ի ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,Տեղական ինքնակառավարման մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերով, և հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի ավագանու՝ 2019թվականի դեկտեմբերի 25-ի <<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի տարածքում 2019թ. համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 75-Ն որոշումը և Մանե Պետրոսյանի հայտը՝ *որոշում եմ.* ,

1.,Մանե Պետրոսյանե անհատ ձեռնարկատիրոջը (հարկ վճարողի հաշվառման համար՝ 66996067) տալ հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի Շնող բնակավայրի՝ փողոց 1, փկղ. 1, թիվ 13 հասցեում գտնվող առևտրի օբյեկտում 2020 թվականի ապրիլի 01-ից մինչև սեպտեմբերի 30-ի համար (կիրառվել է ,Տեղական տուրքերի և վճարների մասինե ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով հաստատած՝ 0. 75 գործակիցը):

2.Հարկատուից գանձել համապատասխան տեղական տուրք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

20 __ թ. _____ _____
գ.Շնող

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 077 608-120, shnogh.lori@inbox.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՄԱՅԻՍԻ 2020թվականի N 97-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԷՄՄԱ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ»-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի տարածքում 2020թ. համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 75-Ն որոշումը և Էմմա Շահնազարյանի հայտը՝ **որոշում եմ**.

1.«Էմմա Շահնազարյան» անհատ ձեռնարկատիրոջը (հարկ վճարողի հաշվառման համար՝ 66942416 տալ ոգելից խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն 2020 թվականի ապրիլի 01-ից մինչև 2020 թվականի հունիսի 30-ի համար (կիրառվել է «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով հաստատած՝ 0.3 գործակիցը):
2.Հարկատուից գանձել համապատասխան տեղական տուրք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

20 __ թ. _____ ____
գ.Շնող

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 077 608-120, shnogh.lori@inbox.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՄԱՅԻՍԻ 2020թվականի N 98-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ՀՈՎԻԿ ԲՈՇՅԱՆ»-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի տարածքում 2020թ. համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 75-Ն որոշումը և Հովիկ Բոշյանի հայտը՝ **որոշում եմ**.

1.«Հովիկ Բոշյան» անհատ ձեռնարկատիրոջը (հարկ վճարողի հաշվառման համար՝ 86291323) տալ ոգելից խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն 2020 թվականի հունվարի 01-ից մինչև 2020 թվականի հունիսի 30-ի համար (կիրառվել է «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով հաստատած՝ 0.3 գործակիցը):
2.Հարկատուից գանձել համապատասխան տեղական տուրք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

20 __ թ. _____ ____
գ.Շնող

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 077 608-120, shnogh.lori@inbox.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՄԱՅԻՍԻ 2020թվականի N 99-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 22-րդ ենթակետով, 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 29-12-2005 թվականի 2387 Ն որոշմամբ՝ **որոշում եմ.**

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի Թեղուտ բնակավայրի կադաստրային քարտեզի 06-037-013-006-003 ծածկագրի 0,014 հա հողամասին և նրա վրա գտնվող անշարժ գույքին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Շնող համայնք, Թեղուտ բնակավայր, փողոց 1, թիվ 5/3 փոստային հասցեն:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

20 __ թ. _____ ____
գ.Շնող

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 077 608-120, shnogh.lori@inbox.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՄԱՅԻՍԻ 2020թվականի N 100-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով և ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 13-Ն 13-Ն հրամանի 11-րդ կետով՝ որոշում եմ

1. 2019 թվականի նոյեմբերի 21-ին հայտարարել մրցույթ ՀՀ Լոռու մարզի Շնողի համայնքապետարանի աշխատակազմի համայնքայինծառայության հետևյալ թափուր պաշտոններն զբաղեցնելու համար՝
1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնողի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ (ծածկագիր 3.1-3), մրցույթը կայանալու է ս/թօգոստոսի 17-ին `ժամը `14.00-ին
2) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնողի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ (ծածկագիր 3.2-1), մրցույթը կայանալու է ս/թ օգոստոսի 17-ին `ժամը `16.00-ին
2.Մրցույթի անցկացման մասին տալ հայտարարություն http://www.azdarar.am հասցեում գտնվող ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում ¨ և այդ մասին երկօրյա ժամկետում տեղեկացնել ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմին:
3. Մրցութային հանձնաժողովի լիազորված անձ նշանակել Հեղինե Ճիճիլյանին :
4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

20 __ թ. _____ ____
գ.Շնող

ՇՆՈՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ՝ ՇՆՈՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Շնողի համայնքապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ (ծածկագիր 3.2-3):

1-ին կարգի մասնագետը.

կատարում է քարտուղարի հանձնարարությունները՝ ժամանակին և որակով.

զարգացման ծրագրերի աշխատանքների մասով՝ պատրաստում է ներդրումային փաթեթները և ծրագրերը, պատրաստում է գրանտային նախագծեր և դիմումներ, պատրաստում է հաշվետվություններ ներդրողների, դոնորների համար.

կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում՝ կազմակերպում է նախադպրոցական և արտադպրոցական կրթության իրականացումը համայնքի տարածքում, իրականացնում է դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը, ապահովում նրանց ընդգրկումն ուսումնական հաստատություն, աջակցում է համայնքում երիտասարդական խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի, միջոցառումների իրականացմանը.

գույքագրում և վարում է համայնքի զբոսաշրջային ռեսուրսների (բնական, պատմամշակութային, մարդկային) գրանցամատյանը.

համայնքի ղեկավարի պաշտոնական տեսակետները ներկայացնում է տեղեկատվության միջոցներին.

անցկացնում է ասուլիսներ և ճեպազրույցներ.

կազմակերպում է համայնքի ղեկավարի հարցազրույցները, ասուլիսները և հանդիպումները մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների ներկայացուցիչների հետ.

իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Աշխատակազմի 1-ին կարգի մասնագետն ունի այլ իրավունքներ ու պարտականություններ՝ համաձայն պաշտոնի անձնագրի:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է ունենալ՝

ա) միջնակարգ կրթություն, առանց աշխատանքային ստաժի.

բ) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

գ) համակարգչով և ժամանակակից տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթներին մասնակցելու համար դիմողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

ա) գրավոր դիմում (տրվում է հանձնաժողովի անունով),

բ) համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնն զբաղեցնելու համար քաղաքացու մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի (ների), վկայականի (ների), աշխատանքային գրքույկի

(վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին,

գ) հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 1801-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով,

դ) հայտարարություն այն մասին, որը ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

ե) «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի «ե» կետի պահանջը բավարարելու նպատակով արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանք,

զ) մեկ լուսանկար (3x4 չափսի),

է) անձնագրի պատճենը:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով: Փաստաթղթերն ընդունվում են Շնողի համայնքապետարանում և Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչությունում, ամեն օր, ժամը 10-ից մինչև 15-ը՝ բացի շաբաթ, կիրակի օրերից:

Ներկայացվող փաստաթղթերի պատճենների հետ միասին անհրաժեշտ է ներկայացնել նաև դրանց բնօրինակները: Ներկայացրած փաստաթղթերի պատճենները ետ չեն վերադարձվում:

Մրցույթին մասնակցել ցանկացողները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնների անձնագրերին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել Շնողի համայնքապետարանի աշխատակազմ (գ.Շնող, հեռ.՝ 094-38-00-94) և Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն (1-ին հարկ, հեռ.՝ 0322-2-21-04):

Մրցույթը կկայանա 2020թ օգոստոսի 17-ին ժամը 16.00-ին՝ Շնողի համայնքապետարանում:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2020թ. օգոստոսի 3-ը:

ՇՆՈՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ՝ ՇՆՈՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Շնողի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ (ծածկագիր 3.1-3):

Առաջատար մասնագետը.

կատարում է քարտուղարի հանձնարարությունները՝ ժամանակին և որակով.

քարտուղարի հանձնարարությամբ կազմում է համայնքի բյուջեի նախագիծը, դրանում առաջարկվող փոփոխությունները.

քարտուղարի հանձնարարությամբ կազմակերպում է ավագանու նիստերին ներկայացվող իր ոլորտի հետ կապված հարցերի նախագծերի նախապատրաստումը.

համայնքի բյուջեի կատարման վերաբերյալ եռամսյա հաղորդումների և տարեկան հաշվետվությունների նախագծերի ներկայացում.

քարտուղարի հանձնարարությամբ, օրենքով սահմանված կարգով վերահսկում է հողի հարկի և գույքահարկի, տեղական տուրքերի և վճարների գանձման աշխատանքները.

առաջարկություն է ներկայացնում քարտուղարին հարկերը և օրենքով սահմանված վճարումները չվճարող անձանց նկատմամբ համապատասխան պատասխանատվության միջոցներ կիրառելու վերբերյալ.

քարտուղարի հանձնարարությամբ վերահսկողություն է իրականացնում համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսա-տնտեսական գործունեության նկատմամբ.

կազմակերպում է համայնքի կարքների համար գնումների անցկացման գործընթացը, կազմում է գնումների տարեկան պլաններ.

իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Աշխատակազմի առաջատար մասնագետ- հաշվապահն ունի այլ իրավունքներ ու պարտականություններ՝ համաձայն պաշտոնի անձնագրի:

Առաջատար մասնագետ-հաշվապահի պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է ունենալ՝

ա) միջնակարգ կրթություն, առանց աշխատանքային ստաժի.

բ) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի, «Տեղական ինքնակառավարման մասին», «Համայնքային ծառայության մասին»,<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> «Նվազագույն աշխատավարձի մասին», «Գանձապետական համակարգի մասին», «Գույքահարկի մասին», «Դրամարկղային գործառնությունների մասին», «Հաշվապահական հաշվառման մասին», «Հողի հարկի մասին», «Պարտադիր սոցիալական վճարումների մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին», «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն

գ) համակարգչով և ժամանակակից տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթներին մասնակցելու համար դիմողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

ա) գրավոր դիմում (տրվում է հանձնաժողովի անունով),

բ) համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնն զբաղեցնելու համար քաղաքացու մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի (ների), վկայականի (ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին,

գ) հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի թիվ 98-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով,

դ) հայտարարություն այն մասին, որը ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

ե) <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի <<ե>> կետի պահանջը բավարարելու նպատակով արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանք,

զ) մեկ լուսանկար (3x4 չափսի),

է) անձնագրի պատճենը:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով: Փաստաթղթերն ընդունվում են Շնողի համայնքապետարանում և Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչությունում, ամեն օր, ժամը 10-ից մինչև 15-ը՝ բացի շաբաթ, կիրակի օրերից:

Ներկայացվող փաստաթղթերի պատճենների հետ միասին անհրաժեշտ է ներկայացնել նաև դրանց բնօրինակները: Ներկայացրած փաստաթղթերի պատճենները ետ չեն վերադարձվում:

Մրցույթին մասնակցել ցանկացողները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնների անձնագրերին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել Շնողի համայնքապետարանի աշխատակազմ (գ. Շնող, հեռ.՝ 094-38-00-94) և Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն (1-ին հարկ, հեռ.՝ 0322-2-21-04):

Մրցույթը կկայանա 2020թ օգոստոսի 17-ին ժամը 14.00-ին՝ Շնողի համայնքապետարանում:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2020թ. օգոստոսի 3-ը: